Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ պետական բյուջեից բազային ֆինանսավորմամբ հիմնարար կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտության ծրագրի

Հաշվետվությունը հանձնված է «____» _____ 2005 թ.

Պայմանագիր թիվ «ՀՀ ԳԱԱ ԾՁԲ -37

Թեմայի կատարման ժամկետը 1. 01. 2005թ-ից մինչև 31. 12. 2009թ.

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1.1 Թեմայի անվանումը **«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություն».**

1.2 **հայագիտություն**

1.3 **ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, Անկախության հրապարակ 1, հեռ. (0312) 3 31 73,**

1. 2005թվականը ՇՀՀ կենտրոնի գործունեության մեջ նշանավորվեց մի շարք ձեռքբերումներով, որոնցից հատկապես կարելի է առանձնացնել կենտրոնի հնագետների կողմից Սեպասարում և Կարմրաքարում կատարված պեղումները, որոնք նոր լույս սփռեցին մարզի տարածքում համապատասխանաբար մ. թ. ա. III հազարամյակի և VII-VI դդ. նոր մշակութային շերտերի առկայության և նրանց առանձնահատկությունների վրա: Հայտնաբերվել են և ներկայումս կամերալ ուսումնասիրության են ենթարկվում մեծ քանակությամբ նյութեր՝ անոթներ, քարե կուռքեր, խեցիներ, ոսկորից գործիքներ, գավաթներ, կարասներ և աշխատանքային գործիքներ, ապակու մածուկից և ագաթից բազմաձև ուլունքներ, բրոնզե մատանիներ և ապարանջաններ: Պեղված հուշարձանները չափագրվել են և կոնսերվացվել:

Կենտրոնի կարևոր ձեռքբերումներից է նաև «Գիտական աշխատություններ» ժողովածուի VI I հատորի հրատարակությունը՝ 15 հրատ. մամուլ ծավալով:

2. Հաշվետու տարում կենտրոնում իրականացվել է բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ» գիտական թեմայի (ղեկավար՝ բ. գ. թ. Ս. Հայրապետյան) առաջին տարվա համար ծրագրավորված աշխատանքը: Թեմայի կատարման մեջ ներգրավված են կենտրոնի 12 գիտաշխատողներ, և ուսումնասիրությունները տարվում են չորս ուղղություններով՝ Շիրակի հնագիտություն, պատմագիտություն, ազգագրություն և էթնո-հոգեբանություն:

▪ Հաշվետու տարում կենտրոնում զգալի աշխատանք է կատարվել մարզի տարածքի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ: Պեղումները կատարվել են Շիրակի երեք հնավայրերում՝ Կարմրաքար, Սեպասար և Հայկաձոր: Կարմրաքար գյուղի տարածքի հնագիտական հետախուզության ժամանակ հայտնաբերվել են մինչ օրս անհայտ երկու հնավայրեր, մեկը գյուղի գերեզմանոցի տարածքում, և այդ մշակութային շերտի նյութերը փաստում են այնտեղ մ. թ. ա. III հազարամյակի բնակավայրի մասին: Երկրորդ հնավայրը շինարարական աշխատանքների արդյունքում բացված կիսավեր դամբարան է իր մարդաբանական նյութերով՝ թաղման ծես, ուղեկցող նյութեր, աշխատանքային գործիքներ, և թվագրվում է մ.թ.ա. VII-VI դարերով:

Կենտրոնի հնագիտական արշավախումբը ֆրանսահայ բարեգործ Պ. Թերզյանի տրամադրած միջոցներով 2005թ. պեղեց նաև Հայկաձորի քարանձավները: Բացվեցին պատեր, թոնիրներ, բուխարի, գտնվեցին խեցեղեն և մետաղյա իրեր, բյուզանդական և արաբական պղնձեղրամներ, մեկ կանացիակերպ աղաման, կարասներ, կճուճներ, պուտուկներ, գավեր, թասեր: Պեղումների արդյունքում պարզվել են կառուցողական և ֆունկցիոնալ նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ: Հնագիտական նյութերը վերաբերում են X-XIV դդ.:

2005թ. պեղումներ իրականացվեցին նաև Սեպասարում՝ պարզելու համար նախորդ տարի պեղված տարածքի ամբողջական պատկերը: Պեղումներով բացվեցին երկու կից

սալարկված սենյակներ, հայտաբերվեց հնագիտական մեծարժեք նյութ: Պեղումներից պարզվեց, որ մ.թ.ա. III հազարամյակի այդ բնակավայրը անկումից հետո երկրորդ անգամ վերակառուցվել է միջնադարում՝ IX-X դարերում: Խումբը հաշվետու տարում հրատարակել է 3 գիտական հոդված և 2 զեկուցման հիմնադրույթներով մասնակցել է գիտաժողովների: Պատրաստ է հրատարակության խմբի ղեկավար Լ. Եգանյանի մենագրությունը՝ նվիրված Շիրակի անտիկ դամբարանային պեղումներին:

▪ Բազային ֆինանսավորմամբ վերոհիշյալ թեմայի շրջանակներում զգալի աշխատանք է կատարվել նաև օտար սկզբնաղբյուրներում և վաղ միջնադարի հայ մատենագիրների գործերում տեղեկություններում առկա ուրարտական արձանագրությունների մեջ և անտիկ աղբյուրներում հիշատակվող առանձին ցեղանունների և տեղանունների ստուգաբանությունները, դրանց տեղադրությունը ճշտելու, Ախուրյանի ավազանը բնակեցրած ցեղերի առասպելաբանական պատկերացումների և պաշտամունքների հնդեվրոպական ակունքները պարզելու ուղղությամբ: Այս պատմագիտական հիմնախնդիրներին են նվիրված այն 11 գիտական հոդվածներն ու հաղորդումները, որոնք 2005թ. ընթացքում պատրաստել է հարցն ուսումնասիրող խումբը՝ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Ս. Պետրոսյանի ղեկավարությամբ:

▪ Թեմայի շրջանակներում զգալի աշխատանք է կատարվել նաև Շիրակի բանահյուսության ուսումնասիրության ուղղությամբ. իրականացվել է բանագիտական և բանահավաքչական զգալի աշխատանք, մասնավորապես հավաքվել և ժանրային առանձնահատկություններով դասակարգվել են 1000-ից ավելի առած և ասացվածք, կազմվել են բանասացների անվանական, սեռատարիքային, աշխարհագրական և ժամանակագրական ուղեցույցներ: Սկսվել է էթնո-հոգեբանական քննություն Շիրակի մարզի ազգաբնակչության սոցիալ հոգեբանական վիճակի շուրջ: Զգալի աշխատանք է կատարվել Շիրակի տարածքում ծիսական արարողությունների նշանակությունը, բնույթը, բովանդակությունն ու սիմվոլանշանային համակարգը ամբողջականորեն ներկայացնելու համար: Դրա հիման վրա կազմվել և հրատարակման է նախապատրաստվել «Շիրակի երգային և բանաձևային բանահյուսություն» ժողովածուն, որով փորձ է արվում տալ Շիրակի մարզի բանահյուսական և ազգահոգեբանական ընդհանուր պատկերը: Խմբի կողմից մշակվել են էքստրեմալ վիճակներում աղետյալ ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացի մեխանիզմները: Հաշվետու տարում կատարող խումբը հրատարակել է 4 գիտական հոդվածներ և 2 հաղորդումներ, իսկ հ. գ. թ. Կ. Սահակյանը վերոհիշյալ հիմնախնդիրների շուրջ 2005թ. գիտական զեկուցումներով մասնակցել է ԱՄՆ-ում կազմակերպված «Երազներ և քուն» և Ֆրանսիայում կազմակերպված «Էթնո - հոգեբանության արդիական խնդիրները աշխարհում» գիտաժողովներին:

3. –

4. -

5. -

6. -

7. –

8. -

Աղյուսակ 1-

Աղյուսակ 2 *2006թ. ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի թեմատիկայի ամփոփ տվյալներ*

Հիմնարկությունը	Պատբյուջեից ֆինանսավորվող թեմաների թիվը					
	բազային		թեմատիկ		նպատակային	
	սկիզբը	ավարտը	սկիզբը	ավարտը	սկիզբը	ավարտը
1	2	3	4	5	6	7
Շիրակի հայագիտա-կան հետազոտու-թյունների կենտրոն	1	-	3	-	-	-

Աղյուսակ 3. –

Աղյուսակ 4. *Կենտրոնում անցկացված հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ*

Հ. Հ.	Միջոցառումներ	անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ.երկրներից
1	2	3	4	5
1.	Գիտական ընթերցումներ նվիրված աշուղ Շերամի ստեղծագործական ժառանգությանը	4-6 ապրիլի Գյումրի	25	
2.	Գիտաժողով «Քաղաքի օրվա» շրջանակներում նվիրված Գյումրու արհեստներին	14 սեպտեմբեր Գյումրի	45	3
3.	Հանդիպում «Հայրենիք Սփյուռք» համաժողովի մասնակիցների հետ	23 սեպտեմբեր, Գյումրի	23	11

Աղյուսակ 5 *ԳԱԱ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ -անդամ երկրներ, կատարած գործուղումները*

	Հիմնարկությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանքն կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
1	2	3	4		5
1	ՇՀՀ կենտրոն	Վրաստան, Ռուսաստան	3 4		

Աղյուսակ 6. –

Աղյուսակ 7. -

Աղյուսակ 8. *ԳԱԱ գիտաշխատողների 2006 թ. հրապարակումների ընդհանուր քանակը*

	Հիմնարկությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն	
		Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.
1	2	3	4	5	6	7	8
1	ՇՀՀ կետրոն	-	-	2	-	37	15

Աղյուսակ 9. *Ասպիրանտների թվաքանակը*

Հիմնարկությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2006 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	**2**	**3**	**4**	**5**
ՇՀՀ կենտրոն	1	2/2	1	-

Աղյուսակ 10. *ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ*

N	Հիմնարկությունը	Աշխատողներ ի ընդհանուր թիվը/այդ թվում կանայք/	Գիտական աշխատողներ ի ընդհանուր թիվը/այդ թվում կանայք/	ԳԱԱ ակադե-միկոսներ /այդ թվում կանայք/	Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/	Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/
1	2	3	4	5	6	7
1	ՇՀՀ կենտրոն	21/15	16/8	-	2/0	7/6

Աղյուսակ 11. –

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա Կ Տ

Գիտական աշխատանքի հանձման-ընդունման

կազմված է « » 200 թ.

Մենք, ներքոստորագյալներս, մի կողմից «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» թեմայի ղեկավարը՝ ի դեմս բան. գիտ. դոկտոր,պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի, մյուս կողմից ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ՊՈԱԿ-ի պրեզիդենտ Ռ. Մարտիրոսյանը, համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «ՀՀ ԳԱԱ- ԾՁԲ -37» պայմանագրի 5 կետի՝ կազմել ենք սույն ակտը այն մասին, որ թեմայի շրջանակներում կատարված աշխատանքը բավարար է և համապատասխանում է օրացուցային պլանում նշված բոլոր փուլերի գծով պարտավորություններին:

Պատվիրատու_____
ստորագրություն

Կատարողը_____
ստորագրություն

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի
1 դեկտեմբերի 2005թ. նիստի թիվ 6 արձանագրությունից

Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ» (պայմանագիր ՀՀ ԳԱԱ ԾՁԲ-37) բազային ֆինանսավորմամբ ծրագրի տարեկան հաշվետվության մասին

2005թ. ընթացքում կենտրոնում լիովին իրականացվել են ծրագրի՝ օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները Շիրակի հնագիտական, պատմագրական և ազգագրական ուսումնասիրությունների ուղղությամբ: Թեմայի կատարման մեջ ներգրավված բոլոր 12 գիտաշխատողների աշխատանքը արժանի է բավարար գնահատականի: Կատարված հնագիտական պեղումները և դրանց արդյունքում ձեռքբերված նյութերը վկայում են ծրագրի հնագիտական մասի կատարման բարձր մակարդակը: Զգալի աշխատանք է կատարվել նաև Շիրակի հնագույն պատմության մի շարք կարևոր հարցերի պարզաբանման, անտիկ աղբյուրներում հիշատակվող ցեղանունների և տեղանունների ստուգաբանության և դրանց տեղադրության ճշտման, Ախուրյանի ավազանի ցեղերի առասպելաբանական պատկերացումների հնդեվրոպական ակունքները պարզելու ուղղությամբ: Շարունակվել է նաև Շիրակի մարզի ազգաբնակչության սոցիալ-հոգեբանական արդի վիճակի ուսումնասիրությունը՝ նպատակ ունենալով բացահայտելու ազգաբնակչության հոգեկարգավորման ներկա գործընթացի մեխանիզմները: Ծրագրի շրջանակներում հրատարակվել են 22 գիտական հոդվածներ և հաղորդումներ: Կենտրոնի 6 աշխատակիցներ գիտական հաղորդումներով հանդես են եկել նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Վրաստանում և Հայաստանում կազմակերպված միջազգային գիտաժողովներին:

Ելնելով վերոհիշյալից՝ գիտխորհուրդը երաշխավորում է ծրագրի հետագա ֆինանսավորումը:

Խորհրդի նախագահ՝ Ս. Հայրապետյան

Գիտքարտուղար՝ Կ. Բազեյան